



«ՅՆՈՒՄԻՄ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՏՀյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը՝ (այսուհետ՝ Ծրագիր) խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է, որի նպատակն է միջազգային բարձր ստանդարտներին բավարարող տրանսպորտային ուղիներով երկրի հարավը կապել հյուսիսի հետ՝ վերակառուցելով 556 կմ երկարությամբ Մեղրի-Երևան-Բավրա ավտոճանապարհը: Այն բաղկացած է մի քանի փուլերից, որոնց իրականացման ընթացքում նախատեսված է վարձել նախագծային և շինարարական կազմակերպություններ: Ծրագրին վերաբերող մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ինտերնետային կայքերից՝ www.northsouth.am և <http://adb.org/countries/armenia/main>: ՏՀյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն | ՊՈԱԿ-ը հրավիրում է հետաքրքրված անձանց հայտեր ներկայացնելու ՊՈԱԿ-ի ներքոնշյալ թափուր պաշտոնի համար

N	Պաշտոնի անվանումը	Հայտի ներկայացման վերջնաժամկետը
1	ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ / ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ	2014թ. ապրիլի 18-ը ժամը 18:00

Հայտը պետք է ներկայացնել հայերեն և անգլերեն լեզուներով vacancy@northsouth.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (**subject line**) նշելով պաշտոնի անվանումը կամ ներկայացնել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գրասենյակ՝ ք. Երևան, Թումանյան 38 հասցեով:
Նշված ժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

Հայտը պետք է պարունակի հետևյալը.

1. ուղեկցող նամակ (առավելագույնը՝ 1 էջ);
2. ինքնակենսագրություն (**Resume** կամ **CV**);
3. երկու երաշխավորողների անունները և կոնտակտային տվյալները:

Բոլոր հայտերը կգնահատվեն համաձայն հետևյալ գնահատման չափորոշիչների.

- Ընդհանուր կրթություն՝ 20 միավոր
- Ընդհանուր փորձառություն՝ 20 միավոր
- Պաշտոնին առնչվող հատուկ աշխատանքային փորձ՝ 30 միավոր
- Պաշտոնին առնչվող հատուկ կրթություն և գիտելիքներ՝ 30 միավոր

ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ 100 միավոր

Հարցերի դեպքում դիմել՝ 060-506870,71 Լիանա Շառոյան



ՊԱՇՏՈՆԸ` ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ/
ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- Աջակցում է Գլխավոր գործադիր տնօրենին կառավարելու կազմակերպության գործունեությունը,
- ապահովում է կազմակերպության առջև դրված նպատակների իրականացումը,
- ապահովում է ՀՀ կառավարության, դոնորների և այլ մարմինների կողմից պահանջվող հաշվետվությունների ժամանակին և որակյալ ներկայացումը,
- մասնակցում է պաշտոնական բանակցություններին և հանդիպումներին, ներկայացնելով ծրագրի շահերը և նպատակները,
- վերահսկում է կազմակերպության փաստաթղթային շարժը և պաշտոնական նամակագրությունը,
- ստորաբաժանումների ղեկավարների հետ համաձայնեցնում և ներկայացնում է Գլխավոր գործադիր տնօրենի հաստատմանը բոլոր նամակները և առաջարկները,
- կատարում է ստորաբաժանումների գործունեության կոորդինացումը,
- անհրաժեշտության դեպքում մասնակցում է ՀՀ քաղաքացիների հետ հանդիպումներին, աջակցում առաջացած խնդիրների լուծմանը,
- Գլխավոր ինժեների հետ համատեղ քննարկում է ներկայացված նախագծերը և նախահաշիվները,
- Գնումների և պայմանագրերի կառավարման ղեկավարի հետ կոորդինացնում է գնումների գործընթացը և անհրաժեշտության դեպքում մասնակցում է գնահատող հանձնաժողովների աշխատանքին,
- կոորդինացնում է Խորհրդատուների և Կապալառուների պայմանագրերի կառավարումը,
- մասնակցում է ծրագրի բյուջեի ֆինանսական կառավարմանը,
- աջակցում է նախագծերի ֆինանսական կառավարման հարցում,
- աջակցում է հետագա տրանշերի համար անհրաժեշտ ֆինանսական հայտերի պատրաստմանը, ըստ անհրաժեշտության,
- աջակցում է ՀՀ տրանսպորտի և կապի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ` ծրագրի կառավարման ֆինանսական համակարգի և ծրագրային (էլեկտրոնային) փաթեթի պատրաստման և այլ ֆինանսական հարցերի լուծմանը,
- Կարողությունների զարգացման, մոնիթորինգի և արտաքին կապերի ղեկավարի հետ կոորդինացնում է մոնիթորինգի իրականացումը և գնահատումը,
- աջակցում է կազմակերպության մասնագետների վերապատրաստման ծրագրի ստեղծմանը` համագործակցելով ոլորտի կազմակերպությունների և տեխնիկական ուղղվածություն ունեցող տեղական կրթական հաստատությունների հետ,
- ծրագրերի շրջանակներում կոորդինացնում է միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ արտաքին շահառուների հետ հարաբերությունների պահպանումը և համագործակցությունը,

- անհրաժեշտության դեպքում վարում է բանակցություններ դոնոր կազմակերպությունների հետ լրացուցիչ ֆինանսավորում ներգրավվելու վերաբերյալ,
- մշակում է նպատակներից և խնդիրներից բխող գործառնությունների և ընթացակարգերի զարգացումը, ղեկավարում է ռազմավարական պլանի իրականացման և ընթացիկ պլանավորման աշխատանքները,
- անհրաժեշտության դեպքում ներկայացնում է ծրագրի իրականացման կազմակերպությունը Կառավարման խորհրդում, ՀՀ նախարարություններում և այլ մարմիններում,
- կատարում է գործառնությունից բխող և/կամ վարկային և ծրագրի համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ,
- կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի այլ առաջադրանքներ:

Իմացություն և որակավորում`

- Բարձրագույն ինժեներական կրթություն ճանապարհաշինության ոլորտում,
- առնվազն 5 տարվա փորձառություն հանրային և/կամ մասնավոր ոլորտների նմանատիպ զարգացման ծրագրերի ոլորտում, որից առնվազն 2 տարի ղեկավար պաշտոններում,
- միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձառություն,
- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն,
- գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),
- ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես` Ասիական Զարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրասիական զարգացման բանկ և այլ դոնոր կազմակերպություններ),
- համակարգչային գիտելիքներ (առնվազն **Word, Excel, PowerPoint, AutoCAD, Microsoft project**):

Մասնագիտական հմտություններ`

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- քաղաքացիների հետ շփման, բողոք-հայտերի բավարարման գործընթացների իմացություն,
- խնդիրների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող /թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստակամություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

Աշխատանքի պայմաններ և դրույթներ`

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: